

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 25/8

26 հունիսի 2012թ.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 12.06.2012թ-ի նիստում քննության է առնվել <Մեծն Սասուն> ՍՊԸ դիմում-բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ Գավառի ՏՀՏ 10.05.2012թ. թիվ 1003406/1 ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ ակտը թողնվել է անփոփոխ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 19.03.2012թ. թիվ 1003406/1 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում <Մեծն Սասուն> ՍՊԸ-ում (այսուհետ նաև Ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության վերստուգում: Արդյունքում 10.05.2012թ-ին կազմվել է թիվ 1003406/1 ակտը (այսուհետ նաև ակտ), որով ԱԱՀ-ի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 6.061.400 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ 01.10.2010թ. բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության թիվ 1003406 ստուգման ակտի 2009թ. ԱԱՀ-ին վերաբերող մասը շարադրել հետևյալ կերպ՝ ԱԱՀ-ի վերստուգումից պարզվեց, որ համաձայն 2009թ. երրորդ եռամսյակի ԱԱՀ-ի հաշվարկի, ՀՀ տարածքում ձեռք բերված ապրանքները և ծառայությունները կազմել է 72.730.500 դրամ, ԱԱՀ-ն՝ 14.546.100 դրամ, որից հետաձգված ԱԱՀ-ն՝ 6.375.800 դրամ: 2009թ. առաջին և երկրորդ եռամսյակներին հետաձգված ԱԱՀ-ից հաշվանցման ենթակա ԱԱՀ-ն՝ 8.292.500: <Մեծն Սասուն> ՍՊԸ կողմից հաշվանցվել է նաև 2009թ. սեպտեմբեր ամսին ՀՀ ՊՆ Երևանի թիվ 1 բազայից հետ վերադարձված փչացած մսի պահածոյի ԱԱՀ-ն 3.222.000 դրամի չափով, խախտելով <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները: Արդյունքում բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ն պակաս է հաշվարկվել 3.222.000 դրամի չափով, որի համար տուգանք է հաշվարկվում համաձայն <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 50% չափով՝ գումարով 1.611.000 դրամ:

2009թ. չորրորդ եռամսյակում դուրս է գրվել փչացած ապրանքներ՝ 2.556.000 դրամի չափով, սակայն խախտելով <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները մատակարարներին վճարված ԱԱՀ-ի գումարը 511.200 դրամի չափով չի վերականգնվել, որի համար համաձայն <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի հաշվարկվել է տուգանք 50% չափով՝ գումարով 255.600 դրամ:

Հիմք ընդունելով <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 23-րդ և 25-րդ հոդվածների դրույթները ԱԱՀ-ի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 6.061.400 դրամ:

<Մեծն Սասուն> ՍՊԸ գանգատում մասնավորապես նշված է.

Ակտի հետ համաձայն ենք մասնակի: Մեր կողմից իրոք խախտվել է <Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները: ՀՀ ՊՆ թիվ 1 բազայից հետ վերադարձրած փչացած 20516 հատ 0.860 գ. մսի պահածոների համար բյուջե վճարված ԱԱՀ-ն՝ գումարով 3.222.000 դրամ, ամբողջությամբ դեբետագրվել է, այնինչ պետք է դեբետագրվեր օգտագործված հումք-նյութերի համար մատակարարներին վճարված ԱԱՀ-ն՝ գումարով 2762157 դրամ, կամ ավել ԱԱՀ է հաշվանցվել 459.843 դրամի չափով:

Մեր կողմից ստուգող խմբին է ներկայացվել օգտագործված հումք-նյութերի հաշվարկը, ՀՀ ՊՆ Երևանի թիվ 1 սննդի բազայի 07.09.2009թ. և 23.09.2009թ. թիվ 1 և թիվ 2 արձանագրությունները՝ վերը նշված մսի պահածոների փչացած լինելու վերաբերյալ, <Մեծն Սասուն> ՍՊԸ հանձնաժողովի կողմից կազմված արձանագրությունը՝ հետ վերադարձված մսի պահածոների թափելու վերաբերյալ, տվյալ ժամանակաշրջանում ստացված և օգտագործված հումք-նյութերի հաշիվ-ապրանքագրերի լուսապատճենները, մսի պահածոների պատրաստման համար անհրաժեշտ հումք-նյութերի նորմաները, ՀՀ ՊՆ կարիքների համար սննդամթերքի մատակարարման գնման պայմանագիրը, սակայն ստուգող խմբի կողմից նշված փաստերը հաշվի չեն առնվել, պատճառաբանելով, որ նման դեպքերում պետք է ճանաչվի մեղավոր անձ:

Ընկերությունը խնդրում է հաշվի առնել նշված փաստերը և տույժ ու տագանքներ հաշվարկել 459.843 դրամ ավել հաշվանցված ԱԱՀ-ի նկատմամբ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցիչների և վերստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստրկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մեծն Սասուն» ՍՊԸ միջև 08.01.2009թ-ին կնքվել է թիվ ՆԱՊՁԲ-7/97-3Պ գնման պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր): Պայմանագրի 1.1 կետի համաձայն, «Մեծն Սասուն» ՍՊԸ-ն (մատակարար) պարտավորվել է ՀՀ պաշտպանության նախարարությանը (գնորդ) որպես սեփականություն հանձնել Պայմանագրի թիվ 2 Հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված տեսակի և որակի սննդամթերք, իսկ գնորդը պարտավորվել է ընդունել այն և վճարել դրա համար:

Ընկերության կողմից մատակարարվել են Պայմանագրով նախատեսված ապրանքները (մսի պահածոներ), սակայն դրանք փչացած լինելու պատճառով (բոմբաժ), հետ են վերադարձվել մատակարարին: Նշված փաստի վերաբերյալ 07.09.2009թ-ին և 23.09.2009թ-ին կազմվել են համապատասխանաբար՝ թիվ 1 և թիվ 2 արձանագրությունները:

Ընկերության ներկայացուցչի պնդմամբ, տվյալ դեպքում ԱԱՀ-ի գծով լրացուցիչ պարտավորություններ չեն կարող հաշվարկվել, քանի որ պայմանագրով նախատեսված պարտավորությունները չեն կատարվել անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Նման պայմաններում պայմանագիրը հանդիսանում է առոչինչ:

Քննարկման ընթացքում վերստուգումն իրականացրած պաշտոնատար անձինք նախ նշեցին, որ վերստուգման ընթացքում վերոգրյալ մսի պահածոները փչացած լինելու պատճառով մատակարարին հետ վերադարձված լինելու վերաբերյալ որևէ փաստաթուղթ իրենց չի ներկայացվել:

Ընկերության ներկայացուցչի պնդումները, որ պայմանագրով նախատեսված պարտավորությունները չեն կատարվել անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, հիմնավոր չեն, քանի որ անհաղթահարելի ուժի ազդեցության իրավիճակները հստակ նշված են պայմանագրի 8-րդ կետում և ապրանքների փչանալու հանգամանքը դրանց շարքին չի կարող դասվել: Այսինքն, մատակարարված մսի պահածոները փչանալու հանգամանքն անհաղթահարելի ուժի ազդեցությանը չի կարող վերագրվել:

Ինչ վերաբերում է Ընկերության ներկայացուցչի այն պնդմանը, որ վերոգրյալ հանգամանքը հանգեցրել է պայմանագրի առոչինչ համարվելուն, ապա այն նույնպես հիմնավոր չէ, քանի որ տվյալ դեպքում գործ ունենք ընդամենը պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու փաստի հետ:

Ելնելով վերոգրյալից Հանձնաժողովը գտնում է, որ ակտով ԱԱՀ-ի գծով լրացուցիչ պարտավորություններն առաջադրվել են ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ: Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո ր ո շ ու մ է՝**

Ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը համաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



S.ԱԽՐՅԵՂՅԱՆ